ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյանի
հաշվետվությունը Ֆինլանդիայի վիճակագրության գրասենյակ կատարած
այցելության վերաբերյալ

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ֆինլանդիա/Հելսինկի/13.03-15.03.2019թ.

- **Նպատակը**

Ֆինլանդիայի վիճակագրության կողմից կազմակերպված հանդիպումներ

- **Քննարկված թեմաները**

Այցելության հիմնական նպատակն էր ուսումնասիրել Ֆինլանդիայի վիճակագրության փորձը հետևյալ բնագավառներում՝ օրենքը, մանդատը, առաքելությունը, տեսլականը, կազմակերպական կառուցվածքը, արտադրանքները և ծառայությունները, մարդկային ռեսուրսների կառավարումը և վերապատրաստումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարդկային ռեսուրսների զարգացմանը մարդահամարի իրականացման համար, Ֆինլանդիայի մարդահամարը՝ ավանդական մարդահամարից դեպի ռեգիստրի վրա հիմնված մարդահամար, դրա պատճառները, նպատակները, մարտահրավերները, առավելություններն ու թերությունները, ինչպես նաև պահանջվող և օգտագործվող ռեգիստրները, ռեգիստրի վրա հիմնված և համակցված մարդահամարը, ընտրանքի մշակման խնդիրները:

Հայկական կողմին ողջունեց Ֆինլանդիայի վիճակագրության գլխավոր տնօրեն Մարյո Բրուունին, որը նաև ներկայացրեց ակնարկ Ֆինլանդիայի վիճակագրության համակարգի վերաբերյալ՝ վիճակագրության կազմման պատմական փուլերը, դիրքը վարչական համակարգում և շահառուները, ռազմավարական նպատակները, խնդիրները, տվյալների մշակումը և վիճակագրության կազմումը, տվյալների անկողմնակալությունը, աշխատանքային միջավայրը, նոր տեսակի աշխատանքի ոճը, հետագա նպատակները՝ կայուն տեղեկատվության էկոհամակարգ:

Հանդիպմանը ներկայացվեցին ռեգիստրների վրա հիմնված Ֆինլանդիայի վիճակագրական համակարգը, վարչական աղբյուրների օգտագործման առավելությունները և մարտահրավերները ու նոր հնարավորությունները վիճակագրական արտադրման համար՝ հիմնվելով վարչական ռեգիստրների վրա:

Ներկայացվեցին նաև բնակչության վերաբերյալ վիճակագրությունը, կենսական վիճակագրությունը և ընտանիքների վերաբերյալ վիճակագրությունը (տվյալների բովանդակությունը և մեթոդաբանությունը), բնակչության տվյալների բազան,

ընտրանքը տնային տնտեսություններում, սոցիալական վիճակագրության ինտեգրված տեղեկատվական համակարգը և գործազրկության վիճակագրությունը:
Հայկական կողմը ներկայացրեց ակնարկ Հայաստանի վիճակագրության վերաբերյալ՝ նոր օրենքը, առաքելությունը, կազմակերպական մոդելը, կառուցվածքը, վիճակագրության պետական խորհուրդը, ազգային վիճակագրական համակարգը, վիճակագրական կոմիտեի համակարգման դերը, Հայաստանում առկա վարչական ռեգիստրները, դրանց օգտագործման առավելությունները և մարտահրավերները:

Մարյո Բրուունը բարձր գնահատեց Հայաստանի նոր օրենքը:

Հայկական կողմի երկրորդ շնորհանդեսը նվիրված էր 2020թ. մարդահամարի նախապատրաստան և կազմակերպման ընթացիկ իրավիճակի և վարչական բնակչության ռեգիստրում առկա տվյալների ներկայացմանը, ավանդական մարդահամարներից դեպի ռեգիստրի վրա հիմնված և համակցված մարդահամարին անցում կատարելու խնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև հետագա անելիքներին:

Ֆիննական կողմը առաջարկեց 25%-անոց ընտրանքն իրականացնել բոլոր բնակավայրերի ընդգրկմամբ:

- **Արդյունքները**

Այցին մասնակցելը հնարավորություն ընձեռեց տեղեկանալու քննարկվող ոլորտների վերջին զարգացումներին, ուսումնասիրելու նոր մեթոդներ, ինստիտուցիոնալ միջոցառումներ և քննարկելու հարցեր կապված նշյալ ոլորտների զարգացման հետ, ուսումնասիրելու նաև նոր գաղափարներ, որոնք կփոխակերպվեն կոնկրետ առաջարկների ամենօրյա աշխատանքների համար:

Այցը նախատեսված էր համատեղ և խթանող միջավայր ապահովելու, սեփական փորձը ներկայացնելու և Ֆինլանդիայի փորձը ուսումնասիրելու, լավագույն փորձի օրինակներ քննարկելու և վերլուծելու համար, ինչպես նաև ուսումնասիրելու մարդկային ռեսուրսների կառավարման համակարգում լավագույն փորձը՝ մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ մշակելու և ներդնելու համար, բարձրացնելու գիտելիքները և ամրապնդելու տեխնիկական կարողությունները՝ վիճակագրական կոմիտեի գործունեությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Այցը հնարավորություն ընձեռեց ուսումնասիրելու վարչական տվյալների օգտագործման, ավանդական մարդահամարի տվյալների հավաքագրումից վարչական աղբյուրների վրա հիմնված և համակցված մարդահամարներին և ռեգիստրների վրա հիմնված վիճակագրական համակարգին անցում կատարած երկրի՝ Ֆինլանդիայի լավագույն փորձը:

Այս ամենը կնպաստի Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի հետագա կարողությունների զարգացմանը՝ միջազգային ստանդարտներին և ԵՄ պահանջներին համապատասխան, հուսալի և ժամանակին վիճակագրական

տվյալների մշակման և տարածման համար, ինչպես նաև սպառողների կարիքների բավարարմանը:

- **Նշումներ**

Այցի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, վարչական աղբյուրների վրա հիմնված մարդահամար անցկացնելու բնագավառում:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին "Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում" Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASTAT դրամաշնորհային ծրագրի "Ինստիտուցիոնալ կառուցվածք և պաշտոնական վիճակագրության օրենք" բաղադրիչի շրջանակում:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան